

**ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱԼՄԱՐՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

1(25) 2012

ՀՏԴ 582.542.1

ԲՈՒԱԱՐԱՆՈՂԵՐՈՒ

ՎԱՅՐԻ ՀԱՅԱԶԳԻՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ

Ա.Ն. Հակոբյան

Արցախի բուսականությունը բավարար չի ուսումնասիրված: Անգամ Ա.Ա. Գրոսհեյմը այն խիստ մակերներն է ուսումնասիրնել: Ուստի ամեն տարի թենկուզ աննշան հետազոտությունները հնարավորություն կտան պատկերացում կազմել Արցախի ֆլորայի վայրի աճող բռյանքի մասին:

Վայրի հացազգիները պատկանում են միաշաքիլավորների դասին, (Monocotyledoneae) կարգին, դաշտավլուկազգիների (Poaceae) ընտանիքին: Սշլարիում կա հացազգիների 900 ցեղ և 11 000 տեսակ, որոնք աճում են ամենուրեք՝ դաշտներում, մարգագետիններում, այգիներում, ճամփեղներին, գետափերին, աղբանոցներում և այլն:

Հացազգիները միամյա կամ բազմամյա խոտաբույսեր են, փնջած արմատային համակարգով կամ կոճղարմատով, ցողունը հանգուցավոր է, ծղրտային, տերևները պարզ են, աղեղնաջիղ, ծաղկաբույլը հասկ է, հուրան, պտուղը՝ հատիկ, սերմերը հարուստ են էնդուսպերմով, սաղմը միաշաքի է:

Վայրի հացազգիները ծղրտաբույլը են: Առաջացնում են երկու տիպի ընձյուղներ՝ կարճացած, որոնք կազմված են միայն արմատամերձ տերևների խրձերից, և երկարացած ընձյուղներ, որոնց առաջացրած ցողունների վրա տերևները նույր են դասավորված: Երկարացած ընձյուղների գագաթին ստվորաբար տեղափորված են հասկեր կամ հուրաններ: Կարճացած ընձյուղները բազմամյանների մոտ առաջին տարում չեն ծաղկում, ծաղկում են հաջորդ տարում (1) (էջ 588-604):

Բազմամյա հացազգիներն ունեն ընձյուղների զարգացման երեք տիպ.

ա) Կոճղարմատավիր հացազգիները բնորոշվում են նրանով, որ ընձյուղները թփակալման հանգույցից հողի մակերեսի տակ երկարում են գլխավոր վերգետնյա ընձյուղին ուղղահայց: Կոճղարմատի զարգացումը ստվորաբար սիմպոդիական է: Օրինակ՝ անքսատ ցորնուկ, եղնակ, սողացող սեղ կամ չայիր:

բ) Նույրաթուփ հացազգիների թփակալման հանգույցները նոյնապես հողի մեջ են, բայց ընձյուղը թփակալման հանգույցից դուրս է զալիս վերգետնյա ուղղաձիգ ընձյուղի նկատմամբ սուր անկյան տակ, ըստ որում թփակալման հանգույցից եկնող այս ընձյուղը ստորգետնյա միայն մեկ միջիանգույց ունի, որից հետո նա զարգանում է արդեն հողից վերև: Օրինակ՝ տիմոֆենկա, մարգագետնային շյուղավտու:

զ) Խտախուփ հացազգիների թփակալման հանգույցները զարգանում են արդեն ոչ թե հողում, այլ հողի մակերեսից հենց անմիջապես վերև: Օրինակ՝ փնտրախտ (սմբուլ), ճմային շյուղախտ, լեշանխտ, փուշխտ:

Հացազգիների ընտանիքի ներկայացուցիչներն աճում են համարյա բռլոր մայր զամաքներում:

Նյույթ և մեթոդ: Աշխատանքում կատարված հետազոտությունների նպատակն է եղել՝ ուսումնասիրնել ԼՂՀ-ում տարածված վայրի հացազգիների տեսակային կազմը և դրանց տարածման արեալները, քարտնզագրել և օբյեկտիվ գնահատել դրանց ներկա վիճակը, որը կունենա կարևոր նշանակություն հետազույթում դրանց պահպանության և բնական օգտագործման հիմայինդիրները լուծելիս:

Հետազոտությունները կատարվել են Արցախի տարածքում 2009-2010 թթ-ին: Հետազոտման նյույթ են հանդիսացել Արցախում տարածված վայրի հացազգիները:

Հնատագրությունները տարվել են երթուղարշավային մեթոդով, որոշիչների օգնությամբ (3) (էջ 90-107) բացահայտել ենք վայրի հացազգիների տեսակային կազմը, տրվել է նաև տարածման արեալները:

Երթուղիները ընտրվել են այնպես, որ առավելագույնս ներառվի տարածքի բնական համակենցությունները, մշակվող ցանքատարածությունները, բարձիթողի մատնական հողատարածները, բնակելի ու սեփականաշնորհիված հողակտորները, անտառմշակույթները, այգիները, ճամփեղբերը, աղբոտ վայրերը, որտեղ վայրի հացազգիների ֆլորան շատ զայտուն է արտահայտված:

Աշխատանքը լրիվ և ամբողջական ներկայացնելու նպատակով ուսումնասիրությունները սկսել ենք վաղ գարնանից և տևել է մինչև ուշ աշուն:

Արդյունքներ և քննարկում: Արցախի տարածքում կատարված հնտագրություններից պարզել ենք, որ վայրի հացազգիներն ունեն լայն տարածում, դրանց կարելի է հանդիպել մարզագետիններում, տափաստաններում, տնամերձ տարածներում, ճամփեղբերին և ամենուր: Դրանց մի մասը հանդիպում են արտավայրերում և հանդիսանում են որպես անամնակենք.

Որոշ վայրի հացազգիներ օգտագործում են զարդարելու կանչապատման նպատակով: Սրանք նպաստում են հողի ֆիզիկական հատկությունների բարելավմանը: Որոշ հացազգիներ հանդիսանում են որպես մոլախտուներ (2) (էջ 23-39): Վայրի հացազգիները նաև արժեքավոր նյութ են սեղմակին աշխատանքների համար, ուստի դրանց պահպանությունը պետք է գտնվի հատուկ հսկողության տակ:

Ուսումնասիրելով վայրի հացազգիների տարածման արեալները կարելի է պլանավորել դրանց տարածման սահմանների լընդայնում:

Վայրի հացազգիների տեսակային կազմը ներկայացված են աղյուսակում և հերբարիումներում:

Արցախում տարածված վայրի հացազգիների տեսակային կազմը

Աղյուսակ

Հ/Հ	Բույսի անվանումը		
	հայերեն	ռուսերեն	լատիներեն
1.	Մանրախտ. դեղանախտ, ճմուտ	Шучка, луговик дернистый	Deschampsia caespitosa
2.	Մարզագետնային շուղախտ	Овсяница луговая	Festica protensis
3.	Որոմ, շայիր, քոշխտ, սեզամ	Пырей, вором, чанга	Agropyrum pertenue
4.	Հուրանախտ սխուկավոր	Мятлик луковичный	Poa bulbosa
5.	Սովորական սանրախտ	Гребенник овсякновенный	Chynosurus cristatus
6.	Ցորնուկ. լորտշակ	Костер кровельный	Bromus tectorum
7.	Դաշտավլուկ միամյա	Мятлик однолетний	Poa annua
8.	Բարակուտնուկ /Կելերիա/	Тонконог	Kaeleria cristata
9.	Խըփուկ սովորական	Овсюг овсякновенный	Avena fatua
10.	Դաշտավլուկ մարզագետնային	Мятлик луговой	Poa pratensis
11.	Աղվեսազի հանգուցափոր	Лисожвост коленчатый	Alopecurus geniculatus
12.	Լելերիա	Келерия	Kaeleria
13.	Աղվեսազի մարզագետնային	Лисожвост луговый	Alopecurus pratensis
14.	Սեղ սողացող	Пырей ползучий	Agropyron repens





Եզրակացություն

Վայրի հացազգիները տարածված են ամենուրեք: Արցախի տարածքում առավել շատ հանդիպում են վերը նշված հացազգիների 14 ցեղերը:

Գրականություն

1. Ժուկովսկի Մ. Ա., Բուսաբանություն, Երևան 1956:
2. Կարապետյան Ռ. Ս., Հայաստանում տարածված մոլախոտերի ատլաս, Երևան 1980:
3. Новиков В. С., Гуванов И. А., Атлас определитель дикорастущие растения, Москва 2008.

Распространение дикорастущих злаков на территории Арцаха

Ա.Ն.Ակոպյան

Резюме

Злаки широко распространены по всему земному шару. На территории Арцаха наиболее часто встречаются 14 родов, которые указаны в тексте.

Distribution of wild cereals in Artsakh

A.N.Hakobyan

Summary

Cereals are widely distributed around the globe. Only 14 genus mentioned in the text most often meet on the territory of Artsakh.

ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՍՊԵЦԻԱԼԻՍՏ ԱՐՑԱԽԻ ԱՐԴՅՈՒՆՎՈՐ ԱԿADEMİC ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՈՒՄՈՒՆՆԵՐԸ

1(25) 2012

ՀՏԴ 612.014

Ֆիզիոլոգիա

5-11 ՏԱՐԵԿԱՆ ՏՂԱՆԵՐԻ ԿԱՐԴԻՈԴԻՆԱՄԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆՔՆԵՐԸ ԽՈՐԴՄԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ ԺԱՄԱՆԱԿ

Մ.Լ. Զհանգիրյան

Աշխատանքի նպատակն է հանրակրթական դպրոցում սովորող 5-11 տարեկան տղա երեխանների մոտ ցոյց տալ կարդիոդինամիկական կամ սիրտանորային գործունեության ցուցանիշները (սրտի կծկումների հաճախականություն, մարսիմալ ճնշում, մինիմալ ճնշում և այլն), նաև կամ կառաջական կրթական համակարգի և ներկայում գործող Եվրոպական կրթական մոդելի ժամանակ, իիմք ընդունելով այն հանգամանքը, որ նոր կրթական համակարգն ունի մի շարք առանձնահատկություններ՝ (աշակերտների գիտելիքների զնահատում 10-բալային զնահատուման եղանակով, ինքնուրույն և գրավոր աշխատանքների զնահատում, թեստային և գործնական աշխատանքների կիսամյակներով զնահատում և այլն), որոնք որպես նոր ու հոգածին գործոններ կարող են փոփոխություններ առաջացնել ամբողջական օրգանիզմի կարդիոդինամիկական ու արյան համակարգերում։ Բազմաթիվ հետազոտություններով պարզված է, որ մարդկանց կարդիոդինամիկական ցուցանիշները նոր և ուժնու ազդակների ներգործունեության դեպքում փոփոխություններ են կրում (1;Էջ 47-52, 5; Էջ 85-88, 6; Էջ 214-219):

Ստացված արդյունքների հիման վրա կատարել ենք որոշակի եզրահանգումներ՝ երեխանների և դեռահասների կարդիոդինամիկական համակարգում և ընդհանուր առողջական վիճակում կատարված փոփոխությունների, հետևապես և նոր մոդելի ազդեցությունների մասին։

Ուսումնասիրությունների մեթոդները և եղանակները: Աշակերտների մոտ կարդիոդինամիկական ցուցանիշների որոշումը 2008-2011 թվականներին կատարվել է հիմնականում Ստեփանակերտ քաղաքի թիվ 1 և 2 դպրոցներում։ Ընդունված կարգով կարդիոդինամիկական ցուցանիշների որոշումը երեխանների մոտ կատարվել է առավելագույն ժամանակում (ժամը 9:00 – 12:00), նրանց հանգստի պայմաններում։ Ուսումնասիրությունները կատարել ենք մեր կողմից հարաբերական առողջ ճանաչված (մարմնի բարձր զնիւմատիճան չունեցող և կլինիկապես առողջ) դպրոցականների մոտ։ Կարդիոդինամիկական ցուցանիշների ուսումնասիրման ժամանակ յուրաքանչյուր աշակերտի մոտ որոշվել է նաև նրանց ֆիզիկական զարգացման հիմնական ցուցանիշները՝ մարմնի երկարությունը (կանգնած և նստած), զանգվածը, կրծքավանդակի և գլխի շրջանագիծը։ Երեխանների կարդիոդինամիկական ցուցանիշների որոշումը կատարել ենք գեներալիզացիայի կամ միջաձիգ կտրվածքի մեթոդով, որի ժամանակ յուրաքանչյուր հասակասեռային խմբի ցուցանիշները տարվա մեջ ուսումնասիրվել են 3 անգամ (աշնանը, ձմռանը, գարնանը) և ցուցանիշի միջինը ստացել ենք դրանց գումարը բաժանելով երեքի։

Դպրոցականների մոտ ակզրում անմիջական ուսումնասիրության ճանապարհով որոշել ենք սրտի կծկումների հաճախականությունը (ՍԿՀ), զարկերակային անոթազարկը կամ պուլսը (Պ), զարկերակային արյան մարսիմալ կամ սիստոլային ճնշումը (ՍՃ, ՄՃ), և մինիմալ կամ